№ 152 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ, 14 ՅՈՒԼԻՍԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-Ի ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ռ., 6 և 7 ամսվ. 6 ռ., ամսակ. 1 ռ. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ռ., Թուրքիա՝ 120 ղրուշ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցեն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակադրոշմով)։

Յայտարարութիւնների համար վճարում են. Ի երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով՝ Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

14-րդ Գրեանդէրեան Գրուզինսկի գունդը, որ գտնվում է Բէ-թիֆլիսի նահանգում, ՀՐԱՒԻՐՈՒՄ Է ՅԱՆԿԱՑՈՂՆԵՐԻՆ ստանձնել գնդի համար մսեղէնի և այլ մթերքների մատակարարումը՝ սկսած յունվարի 1-ից 1911 թ. մինչև յունվարի 1-ը 1912 թ., ներկայացնելով 2000 ռ. գրաւական։ Աճուրդը տեղի կունենայ թէ բերանացի և թէ գրաւոր—փակ ծրարներով—յուլիսի 25-ին 1910 թ., ցերեկվայ ժամը 12 ին, գնդի գրասենեակում, Բէլիյ-Կլիչում, ուր և կարելի է տեսնել կապալի պայմանները։ Փոստով ուղարկվելիք յայտարարութիւնների ժամանակ, գրաւականը պիտի ուղարկել առանձին, ներփակած ծրարի մէջ։

(6, 10, 14) առ. 812. 3—3

ՄԵՐ ԵՐԿՐԻ ԿԵԱՆՔԸ

I

Մենք միշտ առանձին նշանակութիւն ենք տուել մեր երկրի զանազան կողմերից եկած հաղորդագրութիւններին և ամեն պատրաստակամութեամբ տպագրութեան ենք յանձնել մեր երկրի մէջ տեղի ունեցող թէ տնտեսական և թէ հասարակական երևոյթները և փոփոխութիւնները։

Այդ հաղորդագրութիւնները երբեմն եղել են վերին աստիճան նշանակալից, ուսանելի և գրաւել են իրանց վրա առանձին ուշադրութիւն. միւս դէպքերում եղել են միայն հետաքրքրական և ունեցել են կարևորութիւն միայն տեղացիների համար։

Իւրաքանչիւր կէտ մեր երկրում, առանձին վերցրած, անշուշտ չէ կարող տալ առատ նիւթ պարբերական հաղորդագրութիւնների համար։ Եւ դա չէ էլ պահանջվում։ Բայց և այն փոքրը, որ կատարվում է առանձին մի տեղում, միացած միւս երևոյթների հետ, որոնք տեղի ունեն ուրիշ կէտերում, կազմում է մի հարուստ բազմագոյն պատկեր, որ արտացոլում է կեանքի արտայայտութիւնները իր մէջ։

Անկասկած, «Տեղեկութիւններ գաւառից» բաժինը շատ հետաքրքրական է այն բոլոր անձերի համար, որոնք հետևում են մեր գաւառական կեանքին, որոնք հետաքրքրվում են մեր իրականութեան արտայայտութիւններով. բայց գաւառական գրողը յաճախ զանց է առնում իր շուրջը կատարվող բնորոշ երևոյթները և աւելի խօսում է այնպիսի ընդհանուր առարկաների մասին, որոնք յատկապէս ոչինչ չեն ասում այդ կէտի մասին։ Օրինակ, գաւառական գրողը՝ յիշատակելով տեղական տգիտութեան մասին՝ երկար կանգ է առնում այդ նիւթի վրա ընդհանուր դատողութիւններով և տալիս է իսկապէս ոչ թէ գաւառական հաղորդագրութիւն, այլ մի կիսայօդուած։ Նոյնը կատարվում է միւս անգամ մնոտիապաշտութեան, նախապաշարմունքների, վաշխառութեան, զեղծարարութեան և ուրիշ ընդհանուր պակասութիւնների վերաբերութեամբ։ Մինչդեռ տեղական հաղորդագրութիւնների գլխաւոր հրապոյրն ու հետաքրքրութիւնը կազմում են տեղական կեանքի ու նրա երևոյթների արձանագրութիւնները և օրըստօրէ հանդէս եկող կենսական փաստերի ու փոփոխութիւնների լուսաբանութիւնները։

Մեր գաւառական գրողները մեծ պաշտօն են կատարում, տալով իրանց շրջապատում տեղի ունեցող երևոյթների նկարագիրը, և կարող էին մեծ ծառայութիւններ մատուցանել տեղական կարիքների պարզաբանութեան, տեղական ընթացիկ հարցերի մշակութեան։

Որքան էլ զանդաղ առաջ գնում լինի կեանքը, այնուամենայնիւ նա փոփոխութիւնների է ենթարկվում, և կարող ենք համարձակ ասել, որ վերջին տարիներում այդ փոփոխութիւնները աւելի մեծ չափով են կատարվում, քան նախկին տարիներում։

Այդ փոփոխութիւնները, լինեն դրական թէ բացասական, պարունակում են շատ կարևոր, ուսանելի գծեր, որոնք պէտք է արձանագրվեն մամուլի էջերում։

Վերցրէք գիւղի և գաւառական քաղաքի կեանքը և տեսէք, թէ ինչ բնորոշ երևոյթներ են կատարվում այնտեղ։

Արդիւնաբերութեան մէջ կատարվող փոփոխութիւնները, առանձին և հասարակական կեանքի մէջ նկատվող երևոյթները, նոր ազդեցութիւնների, երկաթուղու, գործարանի, դպրոցի, ընկերակցութիւնների, պանդխտութեան նոր ձևերի, տեղական արհեստների տարածման և ուրիշ հանգամանքների առաջ բերած խոշոր ու մանր հոսանքները կազմում են հետաքրքրական նիւթ, որոնք ներկայացնում են մեր կեանքի փոփոխութեան բնաւորութիւնը։

Մենք մինչև այժմ յաճախ ստացել ենք մեր թղթակիցներից բնորոշ հաղորդագրութիւններ իրանց շրջապատող կեանքի երևոյթների մասին և այժմ էլ լիայոյս ենք, որ նրանք գաղափար կը տան այն նոր երևոյթների վերաբերմամբ, որոնք հանդէս են եկել վերջին ժամանակներում։

Մենք միւս անգամ մի քանի խօսք էլ կաւելացնենք աւելի ևս պարզաբանելու մեր հայեացքը։

Ա. Բալանթար

ՎԵՀԱՓԱՌԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Վեհափառ Կաթողիկոսը զեկուցումներից ազատ ժամերին այցելեց մի քանի եկեղեցիներ և հասարակական հաստատութիւններ և ունեցաւ խորհրդակցութիւններ զանազան անձերի հետ։

Վեհափառին ներկայացաւ Պետերբուրգից եկած պրոֆ. Վ. Վարդանեան և տուեց մի քանի կարևոր տեղեկութիւններ եկեղեցական խորհրդի գործունէութեան մասին։ Վեհափառը յայտնեց իր համակրութիւնը այն բազմատեսակ բարեգործութեան համար, որ անում է եկեղեցական խորհուրդը։

Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան նախագահ Ալ. Բալանթար ներկայացրեց ամփոփ տեղեկութիւններ ընկերութեան գործունէութեան մասին։ Վեհափառը յայտնեց, որ նա մեծ հետաքրքրութեամբ հետևում է ընկերութեան գործունէութեան և սպասում է արդիւնարար հետևանքներ հայ գիւղացիութեան համար։ Ցանկութիւն յայտնեց, որ Կովկասում սկսված գիւղատնտեսական ղեկավարութեան գործը ճիւղաւորութիւն ստանայ նաև Վարագում և դառնայ հիմք արդիւնաբերական բարեփոխումների նրա ընդարձակ շրջակայքում։ Յոյս յայտնեց, որ ընկերութեան մասնակցութեամբ աջող կազմակերպութիւն կը ստանան Դաւթեան ժառանգների ձեռնարկած, Ալեքսանդրոպոլ քաղաքի ծրագրած գիւղատնտեսական հաստատութիւնները։ Հետաքրքրվեց, թէ ի՞նչ վիճակի մէջ է Ա. Մանթաշեանի գիւղատնտեսական դպրոցի ծրագրի մշակութեան խնդիրը։ Աւելի մանրամասնօրէն նա հարցասէր եղաւ գիւղատնտեսական հրահանգիչների պատրաստութեան խնդրի մասին, լուսաբանելով որ այժմեանից պէտք է առաջ գնայ մասնագէտ ղեկավարներ պատրաստելու գործը, որպէսզի ապագայում լինեն բաւականաչափ գործողներ հայ գպրոցներին կից բացվելիք գիւղատնտեսական և արհեստագիտական բաժանմունքների համար։ Վեհափառը լիայոյս է, որ Հայ Գիւղատ. և Տնայն. Ընկերութեան գործունէութիւնը արձագանք կը գտնի հասարակութեան լայն ոլորտներում և աջակցութիւն կը ստանայ թէ Պետերբուրգի եկեղեցական խորհրդի և թէ ուրիշ հիմնարկութիւնների ու անհատների կողմից։ Վեհափառը սպասում է հայ ազգաբնակութեան համար դրական օգուտներ, թէ Հայ Գիւղատնտեսական և թէ Կովկասի Հ. Բարեգործական Ընկերութիւնների կողմից։

Յ. Փիրալեան ներկայացաւ Վեհափառին Կովկասեան Տնայնագործական Կոմիտէի կողմից և յայտնելով որ Կոմիտէը մտադիր է այս տարի ուղարկել Սարատովի նկարչին Էջմիածին ժողովելու հայկական գեղարուեստի նմուշներ հիւսուածքների համար, Էն.-ղէ.-ից Վեհափառի թոյլատրութիւնը և օրհնութիւնը։

Վեհափառը բացատրեց, որ Էջմիածնի պատերի վրա շատ քիչ նկարներ են մնացել, որ առանձին բեկորների վրա կան նկարների հետաքրքրական մնացորդներ, բայց թւով աւելի մեծ են ձեռագրեր հետաքրքրական զարդանկարներով, որոնցից և կարելի է օգտվել։ Նա իր կողմից յայտնեց իր համակրութիւնը այդ գործին և ցանկացաւ նկարչի ստանձնած յանձնարարութեանն աջող իրագործութիւն։

Ա. Բ.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 12 յուլիսի

Առաւօտեան ժամը 7-ին մեռաւ յայտնի նկարիչ Արխիպ Իվանովիչ Կուինջին։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 12 յուլիսի

Կայսերական Գեղարուեստական Ճեմարանի օգոստափառ նախագահ Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովնայի անունից՝ վախճանված պրոֆէսոր Կուինջիի դագաղի վրա կենդանի ծաղիկներից պատրաստված մի շքեղ պսակ դրվեց։ (Հ. Գ.)

—

Բագու, 12 յուլիսի

Բարկասի ընդհարումից նաւամատոյցում՝ ջարդված է մեքենաշարժ մակոյկը, որի վրա կային երեսնաչափ պրօսնողներ։ 8 հոգի փրկված են. գրտնված է 4 դիակ. մնացածներին որոնում են։ (Հ. Գ.)

—

Գանձակ, 12 յուլիսի

Երկրորդ անգամ պատահած հեղեղից Նուխու գաւառում քանդվել է Բաշգէչոնուկ գիւղի արևմտեան մասը։ Ոչնչացել են բազմաթիւ անասուններ. կան նաև մարդկային զոհեր։

Հաղորդակցութիւն չը լինելու պատճառով գաւառապետը ոտքով գնաց նոյն գիւղը։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 12 յուլիսի

Բարսէլօնայից հեռագրում են, որ նախկին մինիստր Մաուրայի կեանքի դէմ մահափորձ կատարող ռճրագործը քննիչի մօտ հարցաքննվելիս անձնասպանութեան փորձ արեց։

Սեղանի վրայից վերցնելով մկրատը սկսեց հարուածներով վիրաւորել կոկորդը։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 12 յուլիսի

Մամուլը ընդգծում է այն փաստը, թէ գլխաւոր խորհուրդների համար կատարված ընտրութիւնները բոլորովին միանման արդիւնքներ տուին, ինչ որ պատգամաւորների պալատինը, ամրապնդելով այդպիսով հասարակապետական կազմը և ուժեղացնելով արմատական կուսակցութիւնը։ (Հ. Գ.)

—

Բերլին, 12 յուլիսի

Նիւ-Եօրկից հաղորդում են, որ ռուս-չինական բանկի գործակալութեան մէջ վերաստուգութիւն կատարելիս պարզվեց, որ պակասում են ½ միլիոն դոլլարի արժէթղթեր։ Գանձապահ Վիդեբը խոստովանեց, որ այդ փողերը վատնել է շահագիտութիւններով։

«Վոլֆ-Բիւրոյին» Նիւ-Եօրկից հաղորդում են, որ ստացված են տեղեկութիւններ Բլիւֆիլդսից՝ թէ գեներալ Էսորադայի համախոհները ջարդեցին նախագահ Մադրիսի զօրքերին։ Մադրիսը փախաւ թողնելով պատերազմի դաշտում հարիւրաւոր սպանվածներ և վիրաւորվածներ։ (Հ. Գ.)

—

Պեկին, 12 յուլիսի

Լրագրական տեղեկութիւնների համաձայն՝ չինական կառավարութիւնը մտադիր է հարիւրաւոր չինացի երիտասարդներ ուղարկել Ֆրանսիա, Անգլիա և Գերմանիա՝ ծովային գործը ուսումնասիրելու նպատակով։ Միևնոյն ժամանակ վճռված է այն խոշոր դրամագլուխները, որոնք մնացել են կայսրուհու մահից յետոյ, յատկացնել չինական նաւատորմիղը վերակազմելու համար։

Ռուսահպատակներին սահմանագլուխներից հեռացնելու մասին տարածվող լուրերը միանգամայն անհիմն են։

(Հ. Գ.)

—

Տոկիո, 12 յուլիսի

Դալնիի և Կօբէի միջև երթևեկող «Տէցուրէյմարու» շոգենաւը՝ լոյս կիրակի գիշերը՝ կօրէական Զինդօ բարձրութեան մօտ խորտակվեց։

Զրաստոյ եղան 236 ճանապարհորդներ. 30 հոգի փրկված են։ Մնացեալներին որոնելու համար ուղարկված է պատերազմական մի նաւ։ (Հ. Գ.)

—

Ինչպէս հաղորդում են լրագիրներին Պեկինից, մինիստրները յայտնել են՝ շուտով [illegible] հաշիւ բերելու համար միջնորդելու եկած պատգամաւորներին, որ ոչ ազմինիստրացիան և ոչ ժողովուրդը դեռ պատրաստ չեն սահմանադրութեան համար։ Ներկայացուցիչները պատասխանել են, որ պարլամենտը կը բարեփոխէ ազմինիստրացիան, իսկ ինչ վերաբերում է ժողովրդին՝ չինացիները քաղաքակրթութեան մէջ բոլորովին յետ չեն մնացել ռուսներից, պարսիկներից և թիւրքերից։

—

Պեկին.—Շանդունեան նահանգում յեղափոխականները յարձակում գործեցին զօրքերի վրա։ („Р. У.“)

—

Բերլին. — Գերմանիայի ազատափոխ մամուլը արշաւանք սկսեց ի նպաստ նաւատորմային համաձայնութեան Անգլիայի հետ, պահանջելով առժամանակ դադարեցնել նաւատորմի զօրեղացումը շինարարական նոր պրոգրամի համաձայն։ („Р. У.“)

—

Ռոստով Դ./վ., 8 յուլիսի

„Южный Телеграфъ“ լրագրի խմբագիրը տուգանքի է ենթարկվել 250 ռուբլով, Ա. ճեմեանի հետ ունեցած տեսակցութիւնը տպագրելուն համար, որի մէջ խիստ ոճով քննադատվում է Պետական Դումայի գործունէութիւնը։ („Г. М.“)

—

Մինիստրների խորհուրդը խորհրդակցութեան է ենթարկել երկաթուղիներով անտոմսակ ճանապարհորդելու համար քրէական պատասխանատուութեան ենթարկելու հարցը։

Առաջարկվել է ճանապարհների հաղորդակցութեան մինիստրին մշակել համապատասխան օրինագիծ։

—

Բէլոստոկում երևան է հանված զինուորական ծառայութիւնից կաշառքով ազատող մի հսկայական կազմակերպութիւն։

Այդ կազմակերպութեան միջոցով զինուորական ծառայութիւնից ազատվել են մի տարում մօտ 100 մարդ։

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

—

Կ. Պոլիս, 12 յուլիսի

Թիւրք-գերմանական համաձայնութեան մասին տարածված լուրերի առիթով «Թանինը» ասում է. «Թիւրքիան ստրուկ չի լինի մի որևէ օտար դաշնակցի, այլ ուժեղացնելով իր հրզօրութիւնը՝ ինքնուրոյն դիրք կը գրաւէ իր համար»։ (Հ. Գ.)

—

Բուխարեստ, 12 յուլիսի

Կառավարութիւնը, քաղաքը և Բուխարեստի ուսանողութիւնը պատրաստութիւններ են տեսնում դիմաւորելու Կ. Պոլսից եկող երիտասարդ-թիւրքերի «Միութիւն և Առաջադիմութիւն» կոմիտէի ներկայացուցիչներին և թիւրքական ուսանողութեանը, որոնք փոխ-այցելութիւն են տալիս բումիներին։ (Հ. Գ.)

—

Քննելով իրերի դրութիւնը Պարսկաստանում, ֆրանսիական «Siècle» լրագիրն ասում է, որ Ռուսաստանի ներկայ քաղաքականութիւնը ազում է Պարսկաստանին Գերմանիայի գիրկը։

Ինչպէս իր ժամանակին Բէկօբրազովը և Ալէքսէէվը չը հասկացան մանջուրական խնդրի իսկական նշանակութիւնը, նոյնը կրկնում է ժամանակակից ռուսական դիպլոմատիան՝ չը հասկանալով պարսկական խնդրի նշանակութիւնը։

—

Պարսկական խնամակալը դիմել է Եփրեմին, առաջարկելով գտնել սէիդ Արդուլլահի սպանողներին։ Ինչպէս ասում են, Եփրեմը [illegible] մէջ խառն են բարձր դիրքի անձնաւորութիւններ, որոնց նա ձերբակալել չէ կարող և այդ պատճառով էլ հրաժարական է տալիս։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

I

Պետերբուրգ, 5 յուլիսի

Հինգշաբթի, յուլիսի 1-ին, առաւօտեան ժամը 8-ին մեկնելով Թիֆլիսից արագ գնացքով, ես հասայ Պետերբուրգ երկուշաբթի, յուլիսի 5-ին, առաւօտեան ժամը 8 ին, ուրեմն 96 ժամում կամ ճիշդ 4 օր և գիշեր (сутки)։

Մեր գնացքը կանգ առաւ միայն Բալաշովի կայարանում մի ժամ և Լոստովում՝ մի ժամ։ Մնացած կայարաններում 5—10—15 րոպէ, ոչ աւելի։

Առաջին օրը, այն է՝ մինչև Բալաշովի կայարանը, սոսկալի, անտանելի, հեղձուցիչ տաք էր, և մենք ուղևորները ամբողջվին լողում էինք քրտինքի մէջ։ Երկրորդ օրից սկսած զով էր, իսկ հասնելով Պետերբուրգ՝ ես ուղղակի մրսում եմ ցրտից, այնքան զով է եղանակը այժմ այստեղ։

Վերջապէս, ես ազատ շունչ քաշեցի յուլիսի 2 ից սկսած. ազատ շունչ՝ նախ Թիֆլիսի անտանելի շոգից, որին այլևս դիմանալ չէի կարողանում. ազատ շունչ՝ երկրորդ՝ Թիֆլիսի և առհասարակ մեր հայկական իրականութեան հեղձուցիչ, ստորացուցիչ, ապականված մթնոլորտից։

Ես այժմ տեսնում եմ, որ հայ հասարակական գործչին, հայ հրապարակախօսին առհասարակ անհրաժեշտ է երբեմն երբեմն թօթափել իր ոտքերի փոշին իր հայրենիքում և գնալ մի փոքր ազատ շունչ քաշել, թարմ օդ ծծել օտար հայրենիքում։ Այժմ որքան ծիծաղելի, մանր և զաւեշտական է թւում ինձ այն պայքարը, որ վերջին ամիսը մենք մղում էինք թեժական ընտրութիւնների առիթով։ Եւ ես չեմ կարողանում չը զսպել ծիծաղս ամեն անգամ, երբ մտաբերում եմ այն մեծ եռանդը, ջանքը, որ գործ էին դնում մի խումբ մարդիկ և գործ էին դնում շաբաթներով, միայն նրա համար, որ կարողանան անցկացնել Ռ. Յովհաննիսեանին և Ն. Տէր-Ղևոնդեանին, միայն նրա համար, որ չընտրվի Հ. Առաքելեան, կարծես ամբողջ հայ ազգի բաղդը կախված լինէր դրանից։ Եւ ես ինձ ներել չեմ կարողանում, որ ես ստորացնում էի ինձ այդ մարդկանց հետ կռուելու աստիճանին իջնելու չափ։ Եւ ինչ հարկ կար. սիրեմ միայն նրա համար, որ մի աւելորդ անգամ համոզվեինք, թէ ինչպէս իրանց արմատականութեամբ պարծեցող անձինք ներն ընկած տեղը ամեն տեսակ կոմպրոմիսի են դիմում, դաւաճանում իրանց քարոզած սկզբունքներին և դաշնակցում նորադարականների, արձագանքականների, կղերականների և նոյն իսկ կիղծաբար տէրտէրների հետ։ Ճշմարիտ որ չարժէր։

Բայց թողնենք այդ ամենը։

Կեանքը, իսկապէս գործող կեանքը, հասարակական և գրական կեանքը մեռած է այժմ Պետերբուրգում։ Ամենը գնացել են հանգստանալու, նոր, թարմ տպաւորութիւններ ստանալու։ Օրվայ նորութիւնը կազմում են Ռիգայի հանդէսները, Մոֆիայի նէօ-սլաւօնական հան-

գումարը, Գրինվալդի յաղթութեան տարեդարձի առիթով։ Ահա այն նշանաւոր դէպքերը, որոնցով այժմ զբաղված է մամուլը։

Հարիւր տարի սրանից առաջ, այն է՝ 1810 թ. յուլիսի 4-ին, Մեծ Պետրոս կայսրը վերցրեց և միացրեց Ռիգան Ռուսաստանի հետ։ Այսօր կատարվում է պատմական այդ դէպքի հարիւրամեակի տօնախմբութիւնը, որին ներկայ էին Կայսրը և Կայսրուհին ու ամբողջ պաշտօնական Ռուսաստանը։ Տօնախմբութիւնը հասարակական, ժողովրդական բնաւորութիւն չէ կրում։

Հասարակական նշանակութեան տեսակէտից կարևոր է Սօֆիայի համագումարը, որին հրաւիրված էին սլաւեան ազգերի ներկայացուցիչները։ Սլաւօնական առաջին համագումարը, որի նպատակն է հաներաշխութիւն և բարոյական սերտ կապ հաստատել սլաւեան ցեղին պատկանող բոլոր ազգութիւնների մէջ, տեղի ունեցաւ անցեալ տարի Պրագայում։ Այդ համագումարին մասնակցեցին նաև լեհերը և ռուս ներկայացուցիչներ, զանազան ուղղութիւնների պատկանող։ Սակայն այս երկրորդ համագումարին, որ կայացաւ Սօֆիայում, մասնակցեցին միայն հոկտեմբերեան և աջակողմեան բանակներին պատկանող ռուս ներկայացուցիչները։ Հրաժարվեցին այն շատ հասկանալի պատճառաբանութեամբ, որ կեղծիք կը լինի ճառել, խօսել սլաւեան ազգութիւնների համերաշխութեան և եղբայրական սիրոյ մասին այն ըսպէին, երբ ռուսական Պետական Դուման հէնց նոյն Գուչկովների և Բօբրինսկիների ղեկավարութեամբ այնքան ծանր հարուած հասցրեց լեհ ազգի ինքնասիրութեանը արևմտեան երկիրների մէջ զէմստվօ մտցնելու հարցի առիթով։ Այդ կեղծիքի մասին ակնարկել են և չէին ներկայացուցիչները և մանաւանդ կրամարժը իրանց ճառերի մէջ։ Ճնշել լեհերին իրանց երկրում, թոյլ չը տալ նրանց զարգացնել իրանց լեզուն, գրականութիւնը, արգելքներ ստեղծել լեհական կուլտուրայի առաջ և ապա գնալ ճառեր խօսել ու կոչ անել սլաւեան ազգութիւնների եղբայրական համերաշխութեան մասին... դա, ի հարկէ, ծաղր է։ Եւ ռուս արմատական և ազատամիտ բանակի ներկայացուցիչները կամեցան խնայել լեհերին այդ վիրաւորանքը և չը գնացին մասնակցելու Սօֆիայի համագումարին։

Ամսիս 7-ին մեկնում եմ Ֆինլանդիա։ Մի քանի օր մնալով այնտեղ կը գնամ Ստոկհոլմ, մասնակցելու Համաշխարհային Խաղաղութեան XVIII կօնգրէսին։ Այդտեղից կը գնամ Բրիւսէլ, այցելելու ցուցահանդէսը և մասնակցելու ժամուլի կօնգրէսին։ Հ. Առաքելեան

ԳԾԵՐ, ՆԵՐԿԵՐ

XXXVII

Ցեսմ՞ել էք ինչպէս փոնչին հացը քցում է лопатка-ի վրա և շպրտում փուռը։

Տեսմ՞ել էք և ինչպէս փոնչին բառնում է եփած հացերը փունից և դէն շպրտում։

Այդպէս են և մեր հոգաբարձուները շատ տեղերում։

Կան հոգաբարձուների մէջ շատ արժանաւոր ներկայացուցիչներ, բայց կան և այնպիսիներ, որոնք «հոգաբարձու» բառը վերլուծում են «հոգալ» և «բառնալ» բառերի։

Փոնչին մի հաց է դնում лопатка-ի վրա և քցում փուռը կամ փունից բառնում, իսկ մերոնք նստացնում են մի лопатка-ի վրա 10—20 և երբեմն աւելի վարժապետ և մի անգամից—հայդա—դպրոցի պատուհանից դուրս՝ փողոցի սալայատակը շպրտում։

Թեզ վարժապետները միայն կարողանում են հայ քերականութիւնից ձայնարկութիւնը յիշել և միաձայն, միբերան ճղաւել.

— Օխայ։

Վերջը, երբ «օխայից» յետոյ դուրս են գալիս փոնչիները և նայում իրանց եփած «հացերի» վրա և տեսնում են շատերին փշրված ընկած և ապա դելիկատնի կերպով лопатка-ով սաղլամներին բառնում են և ներս տանում։

Ցոֆանեան դպրոցի 24 շպրտվածներից դուրս եկան 16 սաղլամներ, բայց երբ սկսեցին մէկ-մէկ բառնալ, 5-ը դուրս եկան ըմբոստներ, և որքան սեղանի մէջտեղը չէին դնում, գլորվում, ցած էին ընկնում։

Եւ հոգում են։

Եւ բառնում են։

XXXVIII

Մեր կեանքը չափազանց հեշտ է շտկվում, ուղղվում։

Հարկաւոր է միայն լինել հոգաբարձու, այսինքն լաւ ըմբռնել «հոգալ» և «բառնալ» խօսքերը։

Անցեալներն ինձ պատահեց իմ մի հին բարեկամս, որն ինձ օրօրոցից ճանաչում է, իսկ ես դժբաղդաբար օրօրոցից չեմ ճանաչում, քանի որ նա ինձնից 10—20 տարով մեծ է։

Եւ մի՞թէ դա հետաքրքրական է. հայ իրականութիւնը կարող է ձեզ ճանաչել նոյնիսկ նախ քան օրօրոցը և ճանաչել ամենալաւ կողմից, համբուրել ձեր ճակատը, երգել ձեզ ովսաննա, բայց հէնց որ դարձաւ ձեր հոգաբարձուն, իսկոյն առաջ կը գայ ազգային лопатка-ն, իսկ лопатка-ի վրա յայտնվելը շատ հեշտ է։

Նոյնիսկ անհրաժեշտ է։

Ինձ մի պատկառելի հայ գործիչ, գրող մի անգամ ասաց.

— Գիտէ՞ք, ես շատ տարիներից ի վեր գործում եմ. այսօր շատերը կան ասողներ, որ ես նոյնիսկ ՀՅասակար եմ եղել իմ գործունէութեամբ։

Ես պատասխանեցի, թէ այժմ եկել է лопатка-ի շրջանը և ինքը պարտական է նստել лопатка-ի վրա։

Դառնամ բարեկամիս։

Բարեկամս մի դերասան է։

Դերասան անցեալով։

Նա 32 տարի ծառայում է հայ բեմին, ինչպէս ընդունված է մեզանում á la Պարոնեան ասել, «քայլում է հայ բեմի վրա»։

Կատարել են նրա 25-ամեայ յոբելեանը, ստացել է ընծաներ. ի միջի այլոց և մի ընծայ Հայ Դրամատ. Ընկերութիւնից՝ մի մուրճ և սալ։

Դա մի պատուաւոր ընծայ է։

Եւ այսօր այդ խեղճ հայ բեմի Մակարեանը զանգատվում էր արտասվելու չափ դառն շեշտերով, որ իրան գործ չեն տալիս գոնէ այնքան վարձատրութեամբ, որ կարողանայ իր գոյութիւնը պահել, պահպանել իր ընտանիքը և տալ կրթութիւն իր միակ որդուն։

Գիմնազիստ որդին կողքին գլխիկոր կանգնած էր։

Դառն էր, շատ դառը։

Лопатка,—ասացի մտքումս։

Հոգաբարձու,—անցաւ երևակայութեանս առաջը։

— Եկել է ժամանակը,—ասացի նրան։

— Ինչի՞ ժամանակը։

— Лопатка-ի,—ասացի։

— Ի՞նչ лопатка,—ապշած դարձաւ բարեկամս։

— Հոգալու և բառնալու, ձեր մասին։

— ?

— Лопатка. Յակոբ Գենջեան

ԻՄ ԽՕՍՔԸ

«Մշակի» մէջ վերջերս լոյս տեսան մի քանի թղթակցութիւններ Եալթա-Նուշի երկաթուղու մասին, որոնցից մի երկուսը կրում էին ժողովրդի մէջ զանազան կասկածներ յարուցանող բնաւորութիւն։ Թէև անցեալներում, իմ Թիֆլիս եղած ժամանակ, ես յայտնել էի պ. Համբարձում Առաքելեանին այն, ինչ որ նա արդէն տպել է «Մշակում», բայց առանձնապէս ինձ դիմողների հետաքրքրութեանը բաւարարութիւն տալու համար՝ ես կը ցանկայի ասել հասարակութեանն իմ խօսքը, սկսելով այն մի քիչ հեռուից և յուսալով որ «Մշակն» իր էջերը կը բանայ իմ առաջ։

Երբ ես Անդրկասպեան երկրում 15 տարի շարունակ իմ մասնաւոր առևտրով և գլխաւորապէս տէրութեան զանազան կապալներով էի պարապվում, այդտեղ կային նաև ուրիշ՝ մանր առևտրական հայեր։ Սկզբի 12 տարում մեր գործը շատ լաւ էր գնում և ամենքը գոհ էին իրանց վիճակից։ Հետզհետէ հաւաքվեցին զանազան տարրեր, որոնց թւում՝ ինչ ասել կուզի՝ հայերի համար արիւն ու մարմին դարձած Վասակ մարդիկ, որոնք սկսեցին անմեղ առևտրականներին դրդել դէպի նախանձ, թէ ինչո՞ւ մի Սարուխանեան տէրութեան բոլոր կապալներն իր ձեռքը հաւաքէ, իսկ մենք մնանք զուրկ։ Գնացին իրանք ես և տարան իրանց հետ և ուրիշներին՝ զանազան ամուրդներում նրանց վերջին կօպէկները դրաւ դնելով և իշեցրին ապրանքի գները մինչև մինիմում, որ բացի վնասից ոչինչ օգուտ չէր կարող ունենալ։ Օրինակ՝ հացը 1 ր. 20 կօպէկից իշեցրին 80 կօպէկի, միսը 4 բուբլուց 1ր. 80կ. և 2 բուբլու, շաքարը 10 բուբլուց 7-ի, և մնացածն էլ այդ կարգով։ Այդպէս, նախանձից կուրացած մի 4—5 մարդիկ անմեղ վաճառականների փողերը փչացրին, իրանք ես վնասի տակ ընկնելով, և այդ երևոյթն ինձ դրդեց թողնել տարիներով ստեղծածս գործը և գալ Բագու՝ իբրև առևտրական մի խոշոր կենտրոնավայր։

Բագուն ինձ բոլորովին ուրիշ պատկեր ներկայացրեց։ Այդտեղ ես չը տեսի իմ սպասածը, այլ անսովորմալ մի առևտրական շուկայ։ Ապրանքի գինը մի տարում կամ 5—10 կ. բարձրանում էր, կամ պակասում, և այդ ոչ թէ բնականաբար, ապրանքի առատութիւնից կամ նուազութիւնից, այլ ընդհակառակը, լինում էր ժամանակ, որ գինն ընկնում էր հէնց ապրանքի ամենապակաս ժամանակը, և լինում էր՝ որ բարձրանում էր ամենաառատ ժամանակը։ Ես ուզեցի իմանալ նաթային առևտրի այդ անսովորմալ բնաւորութեան գաղտնիքը և տեսի որ դա մի առևտրական խաղ է, որը կատարվում է բօրսայում երկու հակայ ֆիրմայի ձեռքով՝ յատկապէս մանրներին կլանելու համար։ Եւ իրաւ, տեսիլ հետևանքը.—հրապարակում երևում էին հարիւրաւոր փչացած գործարաններ, նաւեր, նաւթահանքեր, որոնց քառորդը հազիւ պահում էր իր գոյութիւնը։ Այդ աւերիչ դրութեան մասին մեր ժողովուրդը չէր մտածում, եթէ հաշի չառնենք մի փոքր խմբակի սինդիկատ կազմելու նախաձեռնութիւնը. ով կարողանում էր՝ իր գոյութիւնը պահպանում էր, ով չէ՝ ասում էր—ինչ ուզում են դառնան։ Եւ այդպէս՝ 1899, 1900 և 1901 թուերին նաւթի գինը 17, 16, 15 կօպէկից իջաւ 7, 6, 5 կօպէկի և շարունակվեց մինչև 1903 թիւը։ Ճիշդ է, սինդիկատ կազմողներն աշխատեցին ապրանքն իր արժէքում պահել, բայց չեղաւ, որովհետև երկու յայտնի ֆիրմայի սարքած խաղերը փչացնում էին ամեն ինչ։ Կամենալով ես ինքս միայնակ անել այն, ինչ որ ընդհանուր նաւթարդիւնաբերութեանն էր պատկանում, և չը դիմանալով այն առևտրական յանդգնութեան, որ գործ էին դնում այդ երկու ֆիրմաները միւս առևտրականներին փչացնելու համար, ես իմայ ասպարէզ շուկայի բոլոր ապրանքն առնելու այն ենթադրութեամբ, թէ եթէ պուդին մի կօպէկ էլ վնաս անեմ, այնուամենայնիւ մի մեծ ծառայութիւն կը լինեմ մատուցած նաւթարդիւնաբերութեան, իսկ եթէ աւելանայ գինը՝ աւելի ևս ուրախալի, որ նա կը միայ իր բարձր արժէքում։ Մի ամսվայ ընթացքում նաւթի գինը բարձրացաւ 8—9 կօպէկի և երկրորդ ամսից յետոյ արդէն 10 կօպէկ էր։ Գնեցի մինչև 55 միլիօն պուդ նաւթ, որից 51 միլիօնը հում նաւթ, իսկ 4 միլիօնը կերօսին։ Տուի կանխավճար 2 միլիօն և 150 հազար բուբլի։ Ապրանքն ինձ վրա նստեց միջին թւով պուդից 8 կ.։ Առևտրական այդ յեղաշրջումն իր ժամանակին տեղական մամուլի նիւթ դարձաւ, որը շատերին կը լինի յայտնի և կարիք չը կայ մանրամասնութեան մէջ մտնելու։ Կային մարդիկ, որոնք ուրախ էին իմ արածին, կային և այնպիսիները, որոնց կոյր նախանձը հանգիստ չէր տալիս, թէ ինչո՞ւ Սարուխանեան այդպիսի մի հսկայ առևտուր անէ և էժան գնով ապրանք առնէ, թանգ գնով ծախէ։ Իսկ այդ երկու ֆիրման նոր ուշքի գալով՝ տեսան որ այլևս շուկայում ապրանք չը կայ և բոլորը գրաւված է իմ ձեռքի տակ։ Ձայն տարածվեց, որ իբր ես այդ ապրանքն առել եմ ամերիկական ֆիրմաների համար և նոյնիսկ Նոբէլը գտնվարիչը Պետերբուրգից գալով Բագու՝ իր յատուկ միջնորդ Լիպշիցի միջոցով ինձ առաջարկեց 20 միլ. տալ իրան առած գնից 1 կօպէկ աւել, իսկ ես չը համաձայնվեցի և պահանջեցի 4 կօպէկ այն դիտաւորութեամբ, որ ապրանքի գինը բարձր մնայ, այն յոյսով, որ ժողովուրդը հարկաւոր դէպքում ինձ պաշտպանէ։ Բայց ինչ արին։ Մի քանի հայ ֆիրմաներ՝ դարձեալ նախանձից դրդված՝ ուզեցին ինձ ընկած տեսնել։ Դրանցից մէկը մինչև անգամ, մի պատուելի ֆիրմա, որից 10 կօպէկով ապրանք էի ընդունում և առել էի 3 միլիօն պուդ, իմանալով Նոբէլի ինձ արած առաջարկութիւնը՝ նրա միջնորդին քաշում է իր մօտ և առաջարկում 9 կօպէկով 9 միլիօն պուդ, աչքի առաջ ունենալով, որ եթէ Նոբէլն իմանայ ապրանք չը վերցնի, ես հարկադրված պէտք է էժան արժէքով ապրանքը բաց թողնեմ, քանի որ պահելու տեղ չունեմ (միայն նաւթամբարներում պահ տուած ունէի աւելի քան 12 միլիօն պուդ)։ Տեսնելով որ Նոբէլի միջնորդն այլևս ինձ մօտ չէ գալիս՝ մի օր ես նրան պատահեցի դրսում և նա ինձ բացաւ գաղտնիքը՝ ազնիւ խօսք առնելով ինձանից, որ ոչ ոքի չեմ ասի, ինչպէս որ չեմ ասել մինչև այդ առևտրի վերջանալը։ Ի՞նչ էր սպասում ինձ այնուհետև, եթէ ոչ 8 կօպէկով առածս ապրանքը տեսնել ընկած շուկայում մինչև 5—6 կօպէկի և ծախել այդ գնով՝ մօտ մի միլիօն բուբլի վնաս կրելով։ Նոյնիսկ այն 10—11 ֆիրմաները, որոնց մօտ 5—6 հազար բուբլի կանխավճարս է կորել նրանց այդ հարուածների տակ ստացած մանկութեան պատճառով, մինչև այսօր էլ չեն յետ դարձրել այդ փողերը և ես նրանց վերաբերմամբ ոչ մի խիստ ու անպատուաբեր միջոցի չեմ դիմել։ Զը մոռանամ յիշել, որ ձիրգ է ես ասածին վնասներ կրեցի, բայց 6—7 տարի շարունակ չը կրկնվեց այլ ես այդպիսի խաղ, եթէ չը հաշուենք այժմեան կրիզիսը։

Առևտրական այդ մեծ հարուածից յետոյ ինձ վիճակվեց նոյնպիսի մի ծանր գործի նախաձեռնութիւն ստանձնել։ Դա Բագու քաղաքին ջուր մատակարարելու խնդիրն էր, որ մի հրատապ պահանջ էր դարձել ջրի ձեռքին տանջվող ժողովրդի համար։ Ես մտածում եմ Սալմանի՝ Կուրի գետաբերանից նաւերով ջուր բերել Բագու, և սկսում եմ իմ գործը։ Ամերիկական զտիչ մեքենայ (ֆիլտր) եմ բերել տալիս, ջրամբարներ շինում, ահագին ծախքեր անում, ջրի քիմիական վերլուծութեան փորձեր կատարել տալիս, հաւանութիւն ստանում և սկսում ծախս անել, ակնկալելով, որ ժողովուրդն իր գոհունակութիւնը կը յայտնի ինձ այդ առիթով։ Եւ իրաւ, նրա ուրախութեան և գոհունակութեան չափ չը կար՝ տեսնելով կենսաբար ջուրը։ Սակայն ինչպէս ամեն տեղ, այս գործում ևս գոհունակութեան այդ դափնիները հանգստութիւն չը տուին նախանձով բռնված մարդկանց և նրանք սկսեցին իրանց ամենաստոր դերն իմ դէմ։ Մի 5—6 հոգի հայեր, պատրուակելով, որ իբր թուրքերը չեն ուզում իմ ջուրը, իրանք սկսեցին ներքևից խանգարել գործը և արգելք լինել քաղաքում ջուր ծախելուս, և ես հարկադրված եղայ ահագին ծախքերի տակ ընկնելուց յետոյ քաղաքի ինձ տուած ծանր պայմանների տակ ջուրն անցկացնել Սև ու Սպիտակ քաղաքները։ Եւ ինչ էր այդ ամենի գլխաւոր դրդապատճառը. քաղաքը Շօլլարի ջրի համար պրօեկտ ունի կազմած ու 20 միլիօնի փոխառութիւն կնքած, եթէ կուրի ջուրը գործի գնայ՝ ժողովուրդը երես կը կանգնի ու կասի թէ՝ էլ ինչու էք մեզ պարտքի տակ ձգում, ահա Սարուխանեանի ջուրը կայ։ Բայց պէտք է Սարուխանեանի ջուրը դուրս քշել քաղաքից, որ քաղաքին կարելի լինի ջուր տալ։ բացատրութիւններն աւելորդ են... Մ. Բարուխանեան

(Վերջը միւս անգամ)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

Նուխի, 10 յուլիսի

Դարձեալ հեղեղ, դարձեալ աւերմունքներ, նոր-թաղից դէպի հին-թաղը փախչել, սարսափ, լաց ու կոծ,—ահա մեր իրականութիւնը։

Բնութեան այս պատիժը իր խոշոր ՀՅասներով առաջին անգամն է և կարծես ուզում է միանգամից հիմնայատակ անել ամբողջ քաղաքը։ Քաղաքի դրութիւնը օր-օրի վրա քանի գնում աւելի վատանում է։

Երէկ, երեկոյեան ժամը 7-ին, ամպերը ծածկեցին երկինքը, սկսեց փչել սաստիկ քամի. շուտով սկսեց յորդ անձրև տեղալ։ Նախորդ օրերի սարսափի յիշողութեան տակ ժողովուրդը իրար խռնվեց, խանութները կողպեցին, փողոցներում մարդիկ սկսեցին դէս ու դէն փախչել։ Սակայն, չը նայած բարակ անձրևը մինչև լոյս մերթ տեղում էր, մերթ կտրում, առաւօտեան տեղեկացանք, որ դարձեալ հեղեղը բաւականաչափ ՀՅասներ է պատճառել քաղաքին։

Ամսիս 7-ին ժամանեց Իանձակի նահանգապետը։ Վերջինս գաւառապետի հետ միասին շրջեց քաղաքիս բոլոր ՀՅասված փողոցները, յետոյ գնաց քաղաքից դուրս գտնվող մեծ պատնէշը նայելու, որին հեղեղը քշել տարել էր։

Մինչդոյն օրը՝ երեկոյեան ժամը 5-ին բաւականին ժողովուրդ էր հաւաքված նահանգապետի մօտ՝ իր անելանելի կացութեան և քաղաքի ողբալի դրութեան մասին տեղեկացնելու։ Նահանգապետը մեծ հեռաքրքրութեամբ լսում էր ժողովրդին. վերջում նա ասաց, որ հարկաւոր տեղեկութիւնները հեռագրով տրված են Թրֆլիս, շուտով կը գայ կօմիսսիա նախահաշիւ կազմելու. և քանի որ ծախքերը 3—400,000-ի է հասնելու, նահանգապետը խոստացաւ խնդրել կառավարութիւնից, որ վերջինս հոգայ յիշեալ ծախքերը։ Վերջում աւելացրեց, որ ներկայումս ամեն մի քաղաքամաս պարտաւոր է իր բաժին բանտրը տալ գաւառապետին, որպէս զի նա կարողանայ նման հեղեղների ՀՅասներից ազատ պահել քաղաքը։

Այսօր առաւօտեան գաւառապետը, պրիստաւը և կօզակները՝ բոլոր բազարը փաթեթ տալով՝ մեծ ժողովուրդ հաւաքելով իրանց հետ տարել են քաղաքին մօտիկ հեղեղից ողողված պատնէշը շինելու։

Էլիբէգ

Բուենոս Այրես, 12 յուլիսի

Կիրակի, յուլիսի 11-ին, Բուենոս Այրեսի հայոց եկեղեցու ծխականների ժողով էր նշանակված, որը չը կայացաւ օրինաւոր թուի բացակայութեան պատճառով։ Բաֆայէլեանի առաջարկութեամբ՝ ժողովականները մասնաւոր խորհրդակցութիւն ունեցան մի քանի կարևոր հարցերի մասին։ Ժողովին բացակայ էին կանայք, որ ճնշող տպաւորութիւն թողեց հասարակութեան վրա։ Բանից երևաց, որ գործակալ քահանան Թիֆլիսի կօնսիստորիայից ստացել էր Վեհափառի կօնդակի պատճէնը, որով արգելվում է կանանց մասնակցութիւնը ժողովներում և վերացվում է նրանց ձայնի իրաւունքը։ Որոշված էր չը յայտարարել ժողովում այդ գրութիւնը՝ կանանց զգացմունքները չը վիրաւորելու համար, սակայն կանայք կողմնակի կերպով իմանալով այդ՝ ինքնակամ բացակայել էին ժողովից։

Այդ օրը թուղթ էր ստացվել էջմիածնի սինօդից մեր վերջին թղթակցութիւնից յայտնի հին գերեզմանատան հարցի մասին։ Այս տեղից գրութեամբ դիմում էր եղել հոգևոր իշխանութեան, որ թոյլ տրվի եկեղեցական հին գերեզմանատան գետինը բաժանել չքաւոր հայ ընտանիքների վրա՝ այնտեղ բնակարաններ շինելու և ապրելու համար, իբր թէ գետինը հարևանների յափշտակութիւններից զերծ պահելու նպատակով։ Այդ մասին էջմիածնի սինօդը իր պատասխանը պաշտօնապէս տալիս է հետևեալ կերպով, որը հրապարակով կարդաց գործակալ քահանան. «Որովհետև հայոց եկեղեցու դաւանութեամբ, գերեզմանները պէտք է յաւիտեան անշարժ մնան և պահպանվեն մաքրութեամբ, այդ պատճառով էջմիածնի սինօդը մերժում է Բուենոս Այրեսի և Վալպարայզոյի ծխականների խնդիրքը՝ հին գերեզմանների հողերը բաժանելու մասին մասնաւոր մարդկանց»։ Որոշվեց ապագայ ժողովին ներկայացնել մի զեկուցում և գումար պահանջել գերեզմանատունը շրջապատելու համար։

Մեծ անախորժութիւնների և աղմուկի պատճառ դարձաւ այն բանը, որ մի հանգուցեալի դագաղի վրա դրված պակը, որ մնացել էր եկեղեցում, վարձով տրվել էր մի վրացու։ Պակի տէրը բողոք էր յայտնել այդ մասին և պահանջել, որ պակը յանձնեն։ Լաւ կը լինէր, որ հոգ. իշխանութիւնը կտրականապէս որոշէր, թէ, արդեօք, հանգուցեալի դագաղի վրա դրված պակները եկեղեցու սեփականութիւն են դառնում թէ՞ պատկանում են հանգուցեալի տիրոջը, և եկեղեցին իրաւունք ունի նրանց ծախելու կամ վարձով տալու ում կամենայ։

Ապա եկեղեցու երէցփոխ Յակ. Ալիբէգեան յայտնեց, որ ինքն այլևս հրաժարվում է պաշտօնից, որի մասին և դիմել է հոգ. իշխանութեան։ Ցաւելով պէտք է ասենք, որ Ալիբէգեանի հրաժարվելը կարող է զրկանքների ենթարկել եկեղեցին, եթէ նրա տեղը չը բռնէ մի արդար, տակուն և եռանդոտ անձնաւորութիւն։ Իբրև նրա յաջորդ՝ մատնանիշ են անում Կիրակոզովի առևտրական տան կառավարիչ Սեդրակ Տէր-Առաքելեանին, որը եթէ ընդունէ երէցփոխի պաշտօնը՝ բարեբաղդութիւն կը լինի եկեղեցու համար։ Ս. Նազարեան

ԽՕԼԵՐԱՆ ԿԱՐՍՈՒՄ

Կարս, 11 յուլիսի

Ժողովրդի ստորին խաւերում կատարեալ պէս հաւատացած են, որ խօլերայով բռնված հիւանդներին բժիշկները չեն աշխատում առողջացնել, այլ մեռցնող դեղեր են տալիս. այդ պատճառով խուլ թաղերում հիւանդին թագցնում են, որ բժիշկների ձեռքը չընկնի։ Շատ ցաւալի է, որ բժիշկները կորցրել են ժողովրդի մէջ իրանց նշանակութիւնը և չեն կարողացել հաւատ ներշնչել ամբոխի մէջ և վստահութիւն ձեռք բերել, որ հիւանդը հաւատքով դիմաւորէ բժիշկներին և իր փրկութիւնը նրանից յուսայ։ «Վարակվածներին պէտք է մեռցնել», ասում են բժիշկները, և տալիս են մեռցնող պարաշօքներ»,—ահա թէ որպիսի սխալ կարծիք է ընկել ազգաբնակչութեան մէջ և ահա թէ ինչու համար հիւանդներին թագցնում են բժիշկներից։

«Եթէ ճակատագիրը վճռել է, որ ես պիտի մեռնեմ, հազար բժիշկ թափի, չէ կարող Աստուծու վճիռը քանդել».—ահա կրօնական ամբոխի սովորական դատողութիւնը։ Շատերն էլ օրինաւոր բժիշկներից փախչելով հիւանդներին յանձնում են դալլաքներին, որոնք արիւն առնելով սպանում են վարակվածներին։

Ոստիկանութիւնը դալլաքներից ստորագրութիւն է առել, որ այսուհետև իրաւունք չունենան արիւն առնելու։ Հիմա էլ իրանք իրանցից արիւն են առնում և արիւնաքամ լինում։ Մի քանի օր առաջ արտի մէջ հունձ անելիս մէկը բռնվում է. դանակ չէ ճարվում. գերանդիով կտրում են դամարը, արիւն առնում, և տեղն ու տեղը մեռնում է հիւանդը։

Ոստիկանութիւնը բոլոր ձեականութիւնները կատարել է, ամեն տեսակ կարգադրութիւն արել, բարակներ, բժիշկներ, ֆելդշերներ, վերակացուներ, կառքեր վարձել, խրատներ կպցրել պատերին և ամեն միջոց ձեռք է առել մաքառելու խօլերայի դէմ, բայց և այնպէս խօլերան իր բաժինը առնում է. ամեն օր 2—10 հոգի մեռնում են։ Արբեցողները, լսելով որ ոգելից ըմպելիքը խօլերայի դէմ կուելու առաջին զէնքն է, կրկնապատկել են խմելը. առաջ թէ օրու բաժակով կոնծում էին մի-մի հատ, այժմ թէյի բաժակով կոնծում են չորս-չորս հատ։

Բժիշկները անձնուիրաբար պիտի գործեն, սրտոտ պիտի լինեն, ոչ մի արգելքի առաջ չը պիտի կանգ առնեն, վստահութեամբ պիտի մտնեն վարակված խրճիթները և ժողովրդի կասկածը փարատելու համար պիտի աշխատեն շատերի կեանքը ազատել և այդպիսով հեղինակութիւն ձեռք բերել։

Ս. Տէր-Մելքիսեդեկեան

ԱՐԴՈՒՒԻՆ ՆՈՐ ԴՊՐՈՑԸ

Նորերումս պաշտօնական յանձնարարութեամբ գնացած էի Արդուին։ Անձամբ գնացի ու զննեցի այն նոր շէնքը, որ պիտի լինի Արդուինի հայ լուսաւորչական եկեղեցու ծխ. դպրոցը։ Շէնքի երկայնութիւնն է 18 սաժէնից և լայնութիւնը 7 սաժէնից աւելի։ Կանգնած է Ճորոխի կամուրջից դէպի Արդուին քաղաքը տանող ճանապարհի վրա։ Գրեթէ այդ շէնքով սկսվում է քաղաքի տների շարքը։ Ճանապարհի կարգի բերվելով, որի համար արդէն հարկաւոր գումարը որոշված է տալ գանձարանից, կամուրջը պիտի միանայ քաղաքի հետ նորանոր բնակարաններով։ Դպրոցի տեղը այսօր էլ շատ յարմար է, ազատ, մաքուր օդով։ Շինութիւնը երկյարկանի է, քարու կրով, իր մէջ ունի և ընդարձակ դահլիճ այլևայլ հանդէսների համար։ Պէտք է գովել շինութեան հոգաբարձութեան և Արդուինի հայ հասարակութեան ջանք ու եռանդը, որոնք կարճ ժամանակում իրանց ունեցած միջոցներով արդէն շենքը հասցրել են գլուխը ծածկելու աստիճանին։ Սէրը և ոգևորութիւնը դէպի իրանց դպրոցն այնքան մեծ է, որ ոչ միայն հասարակական կնճռոտ խնդիրները յանուն այդ ձեռնարկութեան աջողութեան համամտօրէն վճռում են խաղաղութեամբ, այլև խորին հաւատով հաւատում են, որ Արդուինից դուրս գնվող արդուինցիները, ինչպէս և հայ կրթական գործի գնահատող մեր ունևոր ազգայինները չը պիտի վարանեն իրանց նպաստներով օգնել դպրոցի շինութեան հոգաբարձութեանը՝ պատուով և աջողութեամբ պատկերը սկսված այնքան պիտանի, այնքան կարևոր և այնքան գովելի գործը։

Մեր արդիւնաբեր տարատամ պայմաններում այդպիսի ձեռնարկութիւնները հանդիսանում են յուսատու և ոգեորիչ մեր ապագայի նկատմամբ։

Անձամբ տեսնելով շէնքը և անձամբ վըկայ լինելով շինութեան, հոգաբարձութեան եռանդին ու Արդուինի հայ հասարակութեան հաճակամ վերաբերմունքներին, դամ հրապարակով օրհնելու նրանց աշխատաւորութիւնը և հրաւէր կարդալու Արդուինից դուրս գտնվող արդուինցիներին, ինչպէս և մեր կրթական կործը գնահատող ազգայիններին, փութալ օգնութեան հասնել, նըպաստներ ուղարկել շինութեան հոգաբարձութեան անունով, որպէսզի դպրոցական շէնքը դրամի պակասութեան պատճառով, թերի չը մնայ։ Մեսրոպ ա.-ք. Մելեան

ԽԱՒԱՐ ԽՆՁՈՐԵՍԿԸ

—

Վաշխառուների և կեղեքիչների ճահիճը շարժվում է. մեր գիւղում հայությունը վերջերս «մերիսկի» էր կազմում ծխ. դպրոցը պետական վերածելու։ Մանուկներին արգելում էին դպրոց յաճախել։ Այդ ցաւալի երևոյթի առիթով իր ժամանակին գրվեց «Մշակին», գուժեց և «Գաւառը»։ Գիւղական ուսուցիչներն այդտեղ ամիսներով ոտիկ չը ստանալով՝ քաղցած էին մնում։

Օտարների համար նոր, մեզ՝ իրականութիւնը ճանաչողներիս՝ համար հին երգ։ Սակայն հին վերքն անգամ վերյիշելով՝ մարդ սարսուռ է զգում։ Գիտակից ընթերցողը յուզվում, զայրանում, անիծում է այդ խաւարի զաւակներին. բայց ի զուր։

Մեծ իրաւամբ տեղացի երիտասարդներից մէկը այդ մարգաշատ, բայց խաւարամիտ գիւղը «նոր Սոդոմ-Գոմոր» է կոչել։ Դա Խնձորեսկն է, Զանգեզուրի հսկայ յիմարը։

Ինչպէս գիւղի արտաքինը մութ է, անորոշ և զարհուրելի,—տները, ոչ, որջերը գետնափոր, այս կամ այն ժայռի կուրծքը մխված, կամ միմեանց վրա կուտակված, նեխված,—նոյնքան անորոշ, մութ և խաւարտէին է այդ որջերում զժժացող մարդ արարածների միտքը, ընդունակ՝ միայն սև, սոսկալի և չար մտածումների։

Խնձորեսկի ժողովուրդը յիմար հօտի է նմանում. սատանայագի էրքէշները, «զօրբաներն» են նրա առաջնորդները, կեղեքիչները, բաղդն և դժբաղդութիւնը անօրինողները։ Նրանք ինչ ձև և գոյն ուզում տալիս են այդ տձև, ոչխարամիտ զանգուածին։

Գոնէ այսպէս է մեր գիւղական թէև անմիտթար, դառն, բայց սոսկալի և ամեն ինչ աւերելու, խաւարեցնելու տենչով համակված իրականութիւնը, գիւղական աշխարհը մեծ մասամբ։ Խնձորեսկը այդ զանգուածի տիպիկ բեկորն է։

Դժբաղդ բեկոր, որ հրէշաւոր սգիենքսի նման կատաղած, ինքնամոռացութեան գիրկը նետված, սոված, ագահաբար ինքն իրան է լափում, իր անդամները կրծոտում։ Փորձիր նրան դիպչել կամ ձայն տալ՝ ուշքի բերելու, կորստից ազատելու նպատակով, նա քեզ կը յօշոտի մոլեգնաբար, ապերախտորէն...

Իրար տուն քանդելը, ժողովրդի արիւնը ծծելը և այլ ոճրագործութիւններդ բաւական չէը, որ մանուկ սերնդի մաքուր հոգին և թարմ ուղեղն էլ սկսեցիք թունաւորել, անխղճ վաշխառուներ։ Իսկի հասկանում եք ձեր արածը՝ նորաբողբոջ կոկոնը պատել երկաթեայ վանդակով, չը թողնել բացվելու. մանկան արգելել դպրոց գնալու, այրենի դպրոց. Աստուած իմ, սա մի բարբարոսութիւն է, որ ոչ մի տեղ, ոչ մի մարդ արարած չէը գործի, բացի խաւարամիտ խնձորեսկցիներից։ Սա սոսկալի ոճրագործութիւն, մարդասպանութիւն է։ Բայց չեն հասկանում, չեն զգում իրանց արածի ահռելի գարշելիութիւնը։ Եթէ հասկանային, սիրտներն ու ուղեղները կը ճայթճայթէին ցաւի ու խղճի խայթի սատկութիւնից...

Լսեցէք, թէ ի՞նչ է պատասխանում մէկը այդ ոճրագործ վաշխառուներից, երբ ես նրան յանդիմանում եմ իր ստորութիւնների և չարագործութիւնների համար։

— Հէ՞նչ ես գէլի աւետարան կարդում գլխիս, այ մարդ,—ասում է վեց տարի քեռխվայութիւն արած և այժմ գիւղի ամենաճարպիկ տղրուկը,—օգուտ ես երեսիս թքի, փեշկիրը կը սրբեմ, ալլոհա էն երեսը կը դառնայ... էդ չեմ զուր ա, զուր. հինչ արդարութիւն, հինչ հաւութ, աբուռ ու հայա, եա հինչ խեղճ. կը, մորթի, սպանի, գողացի, քանի ինչ էս դունյումն ես։ Հինչ ծխական ուսումնարան-բաղրը ա,—շարունակում է նա.—ուսումը հինչիա՞ա հարկաւորէն փլանքեասը վեր ուսում չունի՝ խրեկ փող օնի՞... Թա խելքդ կորում ա, թա կարում ես, դիւ ալ կեր, դիւ ալ մորթի, հուա հարցնողը, եա հակառակվողը։ Ախը հինչիդ ա է, վեր ըտրհէնց խօսում ես. էսօր ըստեղ ես, էքուց ոչ. լա քինացիր թա չէ, ալլոհա մէյդանը մերն ա. լաւ կանես վեր մեր պըներումը չը խառնվես, չը խօսաս։

Նոյնը կասէ Խնձորեսկի ամբողջ ազգեցիկ, «զօրբաների» դաս կոչվածը, որ, ինչպէս ասացի վերև, ոչխար մեծամասնութեան տէր ու տնօրէնն է...

Արդեօք թիւրիմացութիւն չէ՞ այդպիսի մթնոլորտի մէջ ծագող թերթը կամ որևէ կուլտուրական հիմարկութիւն։ (Հաստատ հաւոդված եմ, որ Գօրիսը ոչնչով կամ շատ քիչ բանով է տարբերվում Խնձորեսկից)։ Անպայման թիւրիմացութիւն, կամ առնուազն գեղեցիկ, սակայն խաբուսիկ բացառութիւն է։

Մինչև որ հրէշ սգիենքսին գիտակցել չը տանք, որ չէ կարելի ինքն իրան լափել, որ այդ տանում է դէպի տխուր ապագայ, անխուսափելի կորուստ, անհնարին կը լինի կուլտուրապէս մի մտաւոր անգամ առաջ գնալ։ Յ. Մելքումեան

ՄԵՐ ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐԸ

—

Նոր-Բայազէտ, 7 յուլիսի

Ինչպէս յայտնի է, մեր գաւառի զանազան գիւղերից և քաղաքից բազմաթիւ օտարականներ, իբրև բանւորներ և այլ պարապմունքներով զբաղված մարդիկ, գտնվում են թէ Կովկասի և թէ Ռուսաստանի մեծ քաղաքներում (Թիֆլիս, Բագու, Բաթում, Փօթի, Նովոռոսիյսկ, Ռոստով և այլն) աշխատանք ճարելու համար։ Նրանք երբեմն տարիներով և երբեմն էլ աւելի երկար ժամանակով վաճառաշահ այդ մեծ քաղաքների գործարաններում, նաւահանգիստներում, ծխի ու մխի մէջ շաղախված՝ աշխատում են չարքաշ կերպով և իրանց օրավարձով բազմանդամ ընտանիք պահում, որոնք աչքը ճամբին, յոյսն ի սրտին՝ սպասում են իրանց պանդուխտ անդամներին, զարիբներին, որպէսզի մի օր դան տուն և իրանց ուրախացնեն։ Սակայն նրանց օտարականներից շատերը գալիս են հայրենիք, մնում են մի կարճ ժամանակ, ընտանիքի դարդ ու ցաւն խմանում և, երբ բերած փողերն ուտում-ծախսում-պրծնում են և շորերը խունացնում-ժաշում են, այն ժամանակ դարձեալ մտածում են պանդխտութեան մասին, դարձեալ յիշում են մեծ քաղաքների մթնոլորտը... Սկսվում է արտագաղթը. մի կողմից գալիս են և միւս կողմից գնում, չու

հասարակ հարց. ինչէ՞ն է վերաբերում այս ծանօթութիւնը։ Սովորաբար բոլոր հեղինակները ընթերցողի այս բնական հարցասիրութեանը հետևեալ ձևով են բաւարարութիւն տալիս. նրանք չակերտների մէջ են դնում այն խօսքերը, որոնք բառացի վերցրել են ծանօթութեան մէջ յիշած աղբիւրից։ Այսպէս էլ վարվում է Տէր-Պողոսեանը. հասկանալով չակերտների իմաստը, նա IV գլխի 149-րդ երեսին չակերտների մէջ է դնում 9 տողից բաղկացած մի պարբերութիւն. այս պարբերութեան վերջին բառին կցում մի ասդանուան, որին արդէն երեսի տակ հետևում է վերոյիշեալ ծանօթութիւնը։ Ուրեմն ընթերցողի համար բնականաբար կասկած չէ մնում, որ ծանօթութիւնը վերաբերում է միայն այդ չակերտաւոր 9 տողերին և որ IV գլխի նախընթաց մասը ամբողջովին պէտք է վերագրել Տէր-Պողոսեանի անձնական ստեղծագործութեան։ Բայց ինչ ենք տեսնում. IV գլխի նախընթաց երկու երեսներ ոչ թէ Տէր-Պողոսեանի անձնական խօսքերն են, այլ Ֆերվօրնի 56—58 երեսների բառացի թարգմանութիւնը։ Ի զուր ենք փնտռում այստեղ որևէ յիշատակութիւն, որևէ տպագրական նշան։ Ընդհակառակը՝ Տէր-Պողոսեանը անփոյթ ու անհոգ կցել է այստեղ Ֆերվօրնից գողացած անչակերտ 65 տողերին իր ինքնուրոյն երկու եւ կես տողը։ Տէր-Պողոսեանի այս վարմունքը կարելի է բացատրել միայն նրա յեսին միտումներով՝ թաղցնել ուշադիր ընթերցողից այդ երկու երեսի բուն աղբիւրը. կցելով Ֆերվօրնի խօսքերից 65 տող իր սեփական $2^1/_2$ տողին, նա իւրացրել է Ֆերվօրնի խօսքերը, այսինքն՝ պլագիաս է կասարել։

Բայց ինչո՞ւ գրագողը միայն 9 տող է դրել չակերտների մէջ, և ոչ 10 կամ 20 տող։ Որովհետև այդ չակերտաւոր տողերը Պրայէրի իսկական խօսքերն են, վերցված Ֆէրվօրնի գերմանական բնագրի 363-րդ երեսից, իբրև ցիտատ։ Սակայն Տէր-Պողոսեանի հոգեբանութեան մէջ առաջացած այս տարօրինակ առեղծուածը կարօտ է լուծման։ Ինչո՞ւ թարգմանութեան ժամանակ նա չակերտների մէջ է դնում Ֆէրվօրնի գրքում առաջ բերված ցիտատը և ատաղանով յիշատակում այդ մասին ծանօթութեան մէջ, իսկ Ֆէրվօրնի իսկական պարբերութիւնները թողնում առանց չակերտների և առանց յիշատակութեան։ Парчикъ открывается просто. չէ՞ որ աղբիւրներ յիշելիս պէտք է գէթ մի քանի տող չակերտների մէջ դնել։ Իսկ Տէր-Պողոսեանը այնքան ճկուն է իր տարտիֆական միամտութեան մէջ, որ ձգտում է յարմարվելու իր բանագողական հակումներով գրական էտիկայի պահանջներին և այս դէպքում, ինչպէս և բոլոր միւս դէպքերում, գերադասում է աղբիւրները յիշելիս չակերտների մէջ դնել Ֆէրվօրնի գրքում ուրիշ հեղինակներից առաջ բերված ցիտատները, ասել է, թէ տեսնում էք այս Հէկկելն է, այս Հելմհոլցը, այս Պրայէրը, իսկ մնացածը իմ մտաւոր արգասիքներն են։

Պարոնի գրագողական այս հմուտ մեթոդի նկարագրութիւնը լրացնելու համար արժէ յիշատակել նաև հետևեալը։ II գլխի 143-րդ երեսի տակ ընթերցողը ի զուր է փնտռում ծանօթութիւն։ Ուրեմն կասկած չը կայ, որ այս անչակերտ երեսը պլագիաս լինել չէ կարող։ Բայց բաւական է համեմատել յօդուածի այս երեսը Weismann-ի «Vorträge über die Descendenztheorie» II մասի հետ և կը պարզվի, որ 25 տող բառացի վերցված են այս երկի 306—307 երեսներից։ Ինչպէ՞ս հաշտեցնենք Տէր-Պողոսեանի բարոյական ցասումը այս վարմունքի հետ։ Չէ՞ որ նա կոչում է. «Ի՞նչ խղճով էք... պլագիատ համարում մի գրուածք», «որը երես առ երես աղբիւրն է ցոյց տալիս»։ Իսկ «ի՞նչ խղճով» պարոն գրագողը չէ յիշատակում այստեղ «երես առ երես» Վայսմանի անունը։ Ահա այս որակի «բարեխղճութեան» ծամածռութիւններով է աւետում նա աշխարհին իր անբիծ անմեղութիւնը։

II—V գլուխները գրված են բացառապէս այդ ճարպիկ գրագողական մեթոդով։ 145, 146, 149, 150 և 153-րդ երեսների տակ դրված ծանօթութիւնները վերաբերում են միայն Հէկկելի (3 տող), Հելմհոլցի (8 տող), Պրայէրի (41 տող) և Պֆլիւգէրի (44 տող) իսկական խօսքերին, որոնք, իբրև ցիտատներ, չակերտների մէջ են դրված, մինչդեռ Ֆէրվօրնի պարբերութիւնները, որոնք վերցված են բառացի ու բռնում են 164 տող, մնում են առանց չակերտների, առանց ծանօթութեան և առանց յիշատակութեան. և ամեն անգամ նոյն պատմութեան կրկնութիւնը։ Այս էլ բնորոշ է, որ Տէր-Պողոսեանը յեսին բուսլ խոստովանում է, թէ ծանօթութիւնները վերաբերում են նաև անչակերտ տողերին։ Բայց ինչպէ՞ս իմանար այս մասին «բարեմիտ» ընթերցողը։ Sancta simplicitas!...

Այժմ անցնենք VI գլխին։ Այստեղ Տէր-Պողոսեան իր մեթոդը քիչ փոխում է։ Ահա ինչ խոստովանութիւն է անում նա կրկին յեսին բուսլ. «...Ամբողջ գլուխը գրեթէ նրանց մտքերից ենք հիւսել՝ իտամանչիւ պարբերութեան տակ փակագծում դնելով Ֆէրվօրնի կամ Վայսմանի անունները, որ նշանակում է, թէ այդ պարբերութիւնները նրանցից են առնված» («Մշակ» № 143)։

Պէտք է միայն զոհ մնալ յօդուածագրից, որ նա խոստովանում է, թէ ամբողջ VI գլուխը «հիւսել» է Ֆէրվօրնի կամ Վայսմանի մտքերից։ Բայց հիւսելը շատ առաձգական նշանակութիւն ունի, այս պատճառով հետաքրքրական է իմանալ, թէ ինչ միջոցներով է հիւսում նա իր ծանուածքը։

Նախ՝ չէ հասկացվում, թէ ինչ մտքով է ընդունում պարոնը «պարբերութիւն» խօսքը։ Առ այժմ ես վերցնում եմ ամենալայն մտքով, այսինքն՝ «փակագծում դրած անունը» դիցուք ապացոյց է, որ նոր տողից սկսվող նախընթաց ամբողջ կտորը բառացի վերցված է հեղինակից, թէպէտև առանց չակերտների։ Եթէ այս տեսակէտով զեկավարվելու լինենք, էլի մի շարք կտորներ են մնում, մի շարք պարբերութիւններ, որոնք բառացի վերցված են Ֆէրվօրնից կամ Վայսմանից և չեն յիշատակված։ 153-դ երեսին՝ 14 տող (Ֆէրվօրն, էջ 67), 156-դ երեսին՝ 13 տող (Ֆէրվօրն, էջ 72), 157-դ երեսին՝ 16 տող (Ֆէրվօրն, էջ 72), 160-դ երեսի վերջում՝ 8 տող (Վայսման, էջ 307). ընդամենը՝ 51 տող։

Բայց «պարբերութեան» վերջը հեղինակի անունը դնել փակագծի մէջ՝ նշանակում է ոչ թէ այն, որ այդ կտորը բառացի թարգմանութիւն է, այլ որ այն քաղված է ուրիշների երկի բովանդակութիւնից։ Այս հասարակ իրողութեան հետևում է. եթէ այդ կտորներն ևս բառացի թարգմանութիւն են առանց չակերտների, պէտք է ևս այդ կտորները համարել պլագիաս։ Իսկ պարոնը դիտմամբ հետևեալ երեսներին էլ մոռանում է չակերտների արժէքն ու նշանակութիւնը. եր. 154՝ 35 տող (Ֆէրվօրն եր. 68—69), եր. 157—158՝ 24 տող (Ֆէրվօրն եր. 71—72), եր. 160, սկզբում—8 տող (Վայսման, II, 307), եր. 163՝ 11 տող (Վայսման, II, 309)։

155-դ երեսին Տէր-Պողոսեան առաջին ու վերջին անգամ չակերտների մէջ է դնում Ֆէրվօրնի սեփական խօսքերից միայն երեք տող։ Այս այն հռչակաւոր տողերն են, որոնց առիթով նա զայրացած կոչում է. «Ինչպէ՞ս էք պնդում, թէ մենք միայն «մի տեղ ենք բարեհաճել Ֆէրվօրնի երեք տողը չակերտների «մէջ դնել»։ Իսկ Ա. Տէր-Պողոսեանը կարող է այսօր պնդել հակառակը։

VI գլխի մասին յանգում ենք հետևեալ եզրակացութեան. Ֆէրվօրնից յիշատակված են 3 տող, Վայսմանից՝ 21 տող. ընդամենը՝ 24 տող։ Միանգամայն չեն յիշատակված 51 տող, 78 տող վերցված են առանց չակերտների. ընդամենը՝ 129 տող պլագիաս։

Ուրեմն՝ II—VI գլուխներում 293 տողը միանգամայն պլագիաս է (II—V՝ 164 տող, VI՝ 129 տող), 3 տող յիշատակված է Ֆէրվօրնից, 21 տող՝ Վայսմանից և 96 տող զանազան ցիտատներից, վերցված Ֆէրվօրնի գրքից (Հէկկել, Հելմհոլց, Պրայէր և Պֆլիւգէր)։

Բացի առաջին գլխից՝ բոլոր միւս գլուխները շաղախված են պլագիատի թոյնով, այն էլ մեծ չափերով։

«Ձեզ յայտնի է, անշուշտ, ընթերցող,—կոչում է Տէր-Պողոսեանը («Մշակ» № 143), որ պլագիաս կոչվում է ուրիշի մտքի սեփականութեան գողութիւնը. ով որ ուրիշի գրուածքից կտորներ, երեսներ կամ նոյնիսկ փոքրիկ մասեր է առաջ բերում եւ չի յիշատակում աղբիւրը, այսպիսին պլագիաս, գրագողութիւն է կատարում»։

Ա. Տէր-Պողոսեանը այստեղ իր բերանով կարդում է արդէն իր սեփական դատավճիռը... Միք. Ղարաբէկեան

(Վերջը միւս անգամ)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 4 յուլիսի

Անունով սահմանադրական, էութեամբ բռնապետութեան օրերից աւելի անկարգ ու անկերպարան Պարսկաստանի ներկան քաօսային, իսկ ապագան մշուշապատ է։ Ամենուրեք անդուսպ շփոթութիւններ, յափշտակութիւն, աւազակութիւն և սպանութիւն կատարվում են ամեն օր։ Ճանապարհներում կեանքն ու գոյքն անվստահութեան են մատնված. անսանձ գլուխ են բարձրացրել խաւար ոյժերը և անդադար գործում ըէակցիօն տարրերի հաշին գիտութեամբ թէ անգիտակցաբար, տարրեր՝ որոնք, կարծես, գնալով առաւել լայն չափեր են ստանում՝ շնորհիւ տիրող անկարգութեան ու անանկութեան։ Մեծ չէ պարսիկ մաքուր հայրենասէրների թիւը. չը կան երկիրը իր նօրմալ վիճակին վերածելու կարող գլուխներ ու ձեռքեր։ Պարսկաստանի ծաղիկ յոյսը՝ մէջլիսը գոյութեան օրից ոչինչ շինարար գործ չը տուեց մինչև այսօր, և ոչ ևս նոր ակնկալութիւններ կարելի է ունենալ նրա յետագայ գործունէութեան համար՝ աչքի առաջ պատկերացնելով նրա կազմը, որը բաղկացած է, սակաւաթիւ բացառութեամբ, ագնոյն ու անգիտակից անդամներից։ Տեսէք ուրեմն ինչ կը լինի գաւառական քաղաքների անջոմանների պատկերը։ Օրէ-ցօր տնտեսապէս չքացող աղքատ ժողովրդի յոյսը սպառվում է և աղաղակող բողոք է դառնում կառավարութեան դէմ։ Իրերի արդի կացութեան նայած՝ դժուար թէ ռուսները դուրս գան երկրից, որպէս զի երկիրը մնէր խաղաղ գործունէութեան շրջանը։

Հեռագիրը գուժեց Թէհրանում մեծ մուշտէիդ սէիդ Աբդուլլահի սպանութիւնը տակաւին մեզ համար անյայտ անձնաւորութիւնների կողմից։ Վրդովմունքը Թաւրիզում մեծ է. 2—3 օր է՝ բազարները փակված են ի պատիւ մուշտէիդի, միևնոյն ժամանակ կատարվում են սգահանդէսներ (թազիէ) մզկիթներում։ Դեռ ևս անցած տարվայ նախկին շահ Մահմէդ-Ալիի մէջլիսը ռմբակոծելուց առաջ սէիդ Աբդուլլանը ճանաչվում էր երկրեռանի անձն, և միշտ ենթակայ սահմանադրական նացիոնալիստների խորը արհամարհանքին։ Եթէ կարեւորութիւն ընծայենք հասարակաց կարծիքին, սէիդ Աբդուլլահի սպանողները պէտք է լինեն յայտնի Թաղի-զադէի կուսակիցները։

Թէհրանը շատ խառն է. սպասվում է ճշգրիտ լուրերի։

Մի քանի օր առաջ տօնվեց Պարսկաստանի մանուկ շահի գահակալութեան տարեդարձը հրավառութեամբ և արժանաւոր շքով։ Նահանգապետ Մուխբիր-ուս-Սալթանէն հիւպատոսներին, եւրոպացի, հայ և թուրք աչքի ընկնող պաշտօնեաներին իր ընակարանում տուեց եւրոպական նուրբ ճաշակով ու շքեղութեամբ մի փարթամ երեկոյթ à la fourchette, ուր նուագում էր ռուսաց զինուորական նուագախումբը։ Հէնց այդ երեկոյթին էր, որ հասաւ սէիդ Աբդուլլահի սպանութեան հեռագիրը։ Մուխբիր-ուս-Սալթանէն հարկադրվեց շտապել միայն Լիլաւայի աշակերտական նուագախմբով։ Հանդիսականները մեծ բաւականութեամբ մեկնեցին՝ շնորհաւորելով Սուլթան Ահմէդ շահի գահակալութեան տարեդարձը։

Մարդկութեան ահաւոր սարսափը՝ խօլերան մօտենում է Թաւրիզին Արդաբիլի ճանապարհով։ Նոյն տեղում օրական 6-8 մարդ մեռնում են խօլերայից։ Հիւանդութիւնը հասել է Սարաբ, որ գտնվում է Արդաբիլի և Թաւրիսի միջև՝ Թաւրիզից 9 փարսախ հեռաւորութեան վրա, մօտ 108 վերստ։

Խօլերայի արշաւանքի առաջն առնելու նպատակով ինչ-որ իրարանցումներ նշմարվում են, այն է՝ սանիտարական ժողով կազմել, 12 բժիշկների պաշտօն յանձնել, սահմաններում կարանտին դնելու որոշում անել, Թաւրիզի փողոցները մաքրելու, վրան բաց ջրերը մաքուր պահելու համար ծածկել տալ և այլն. սակայն իրականութեան մէջ դրական ոչինչ։ Ինչո՞ւ.—շատ պարզ է, որովհետև հարկաւոր ծախսերի համար դրամ չը կայ։ Առանց մարգարէ լինելու կարելի է գուշակել անտէր Պարսկաստանի վիճակը, երբ մուտ գործէ անկոչ հիւրը... Հայկազուն

Ե. Գ.—«Մշակին» գրել էի Սալմասում Փութավար գիւղի ասորի դաշայի հրաժարեցվելը իր պաշտօնից անդրալեռնական լազարիստների կողմից։ Առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի հրահանգով, առաջնորդական փոխանորդ տէր-Կարապետ քահանան դիմել էր ֆրանսիական հիւպատոսին, որ միջամտէ, որպէսզի խեղճ քահանան իր հացից չը զրկվի։ Մի օր առաջ հիւպատոսը յայտնել է առաջնորդական փոխանորդին, որ դաշան ներման է արժանացել և նորից ստանձնել իր պաշտօնը։ Նոյն

ԿՐԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Կրետական հարցը քաղաքական աշխարհի համար դարձել է ուղղակի մի անլուծելի գորդեան հանգոյց, իսկ վերջերս նա իր վրա հրաւիրեց քաղաքակիրթ ամբողջ աշխարհի լիակատար ուշադրութիւնը։ Ցայտնի է, որ այդ կղզին, ընակված լինելով մեծ մասամբ յոյներով (կան և թիւրքացած յոյներ և զուտ թիւրքեր), երկար ժամանակներից ի վեր ձգտում է յունական պետութեան հետ միանալու, որի համար նա թափել է ամեն ճիգ ու ջանք, բայց ապարդիւն։ Սակայն թէ Աբդիւլ Համիդի և թէ ներկայ սահմանադրական թիւրք կառավարութեան օրով, հակառակ կողմից, այն և՝ օսմանեան կառավարութեան կողմից, յարուցվում են այնպիսի արգելարգելներ, որ հովանաւորող պետութիւնները ոչ մի կերպ չեն կարողանում մի վերջնական լուծում տալ կրետացիների համար մանու և կենաց չափ խոշոր նշանակութիւն ունեցող այս հարցին, թէև Կրետէ կղզին de facto չէ կարելի Թիւրքիայի մի մասնիկը համարել, որովհետև նա երկար տարիներից ի վեր անկախ մի պետութիւն է, ունի իր խորհրդարանը, իր կառավարութիւնը... և այդ բոլորը կղզու աղգաբնակութիւնը ձեռք է բերել իր լաւագոյն զաւակների արեան գնով։

Օսմանեան կառավարութիւնը լոկ անուանական տէր է այդ կղզու, որ եւրոպական խօսքով ասվում է՝ սիւզէրէնիտէ, և այդ դրութիւնը շարունակվում էր մինչև անցեալ տարվայ կօնֆլիկտը, երբ Թիւրք կառավարութիւնը լուրջ կերպով միջամտեց կղզու գործերին։ Ներկայիս Կրետէն հովանաւորող պետութիւնները, ցանկանալով մի ելք, լուծում տալ այս հրատապ խնդրին, իրանց նստայով յայտարարել են, որ կղզու սիւզէրէնիտէն, այսինքն գերիշխանութիւնը պատկանում է Թիւրքիային, ուրիշ խօսքով՝ նա պետութեան մի մասն է, նահանգներից մէկն է, միայն որոշ ինքնավարական իրաւունքներով, այն ինչ՝ Կրետէ կղզին միայն ձևականօրէն ճանաչում էր Թիւրքիայի գերիշխանութիւնը։

Ուրեմն, պետութիւնների նստայից կարելի է այն եզրակացութեան գալ, որ այն ամեն իրաւունքները, որոնց յաջորդաբար ձեռք էր բերել կղզին, հոգնիսկ պետութիւնների լուռ հաճութեամբ, այժմ ոչընչացվում, յետ են վերցվում, մի դրութիւն, որի հետ ոչ մի պայմանով չի հաշտվի կրետացին և մանաւանդ այն պարագայում, երբ նա, թէև ոչ պաշտօնապէս՝ այլ գաղտնապէս, վայելում է յունական կառավարութեան աջակցութիւնը, իսկ ժողովուրդն ամեն միջոցներով աշխատում է իրականացած տեսնել թէ իր և թէ Կրետէի ազգաբնակութեան իդէալ՝ Կրետէի միացումը Յունաստանի հետ, որի համար նա պատրաստ է նոյնիսկ Թիւրքիայի հետ զինուորական ոյժերով չափվելու, պատերազմելու, թէև այդ պատերազմն ևս, նման 1897 թ-ի յոյն-թիւրքական պատերազմին, կը վերջանայ Յունաստանի կատարեալ պարտութեամբ։

Թիւրքիան Արդիւլ Համիդի օրով, 1897 թ., երբ կատարելապէս ընկած էր ամեն կողմերով, շնորհիւ խայտառակ, յոռի կարգերի և երկրի մէջ տիրող անընդհատ ապստամբութիւնների ու յեղափոխական խլրտումների, երբ ամբողջ երկրի ազգաբնակութիւնը գլխովին դժգոհ էր կառավարութիւնից (արտօնեալների մասին չէ խօսքս), կարողացաւ ամենախիստ հարուածը տալ Յունաստանին. այժմ, երբ նա ի մի է հաւաքել իր բոլոր ոյժերը և իր կողմը դարձրել երկրի համարեա ամբողջ ազգաբնակութեան համակրանքը, շնորհիւ սահմանադրութեան ի հարկէ, կը դժուարանայ արդեօք ամենախիստ հարուածը տալ փոքրիկ Յունաստանին։

Այս տեսակէտից եթէ մօտենալու լինենք խնդրին, կը տեսնենք, որ այդ կերպ կրետական հարցի լուծումը անկարելի է բնաւին։

Մնում է միայն մի միջոց և այդ այն է, որ պետութիւնները, ի նկատի ունենալով «յունական յամառութիւնը», յարգեն տարիներ առաջ իրանց հաճութեամբ իսկ վաւերացված որոշումները և սուվէրէնիտէն փոխեն սիւզէրէնիտէի, որով կղզու ազգաբնակութիւնը նորանոր ապարդիւն արիւնհեղութիւններից։

Այս առիթով «Раннее Утро» թերթում Առաքել Դէրվիշը գետեղել է բաւական լուրջ մի յօդուած, որի մէջ յիշված են կրետական օպպոզիցիայի պարագլուխ Միխէլիդակիսի կարծիքները, որ նա յայտնել է ժուրնալիստներից մէկին, այն մտքով՝ թէ նման «հանաքը» կարող է շատ լուրջ հետևանքներ ունենալ, և դա այն կը լինի, որ սկիզբ առնեն նորանոր անկարգութիւններ կղզու վրա և որ կրետացիները չեն կարող հաշտ աչքով նայել եւրոպական պետութիւնների այդ նոր քայլի վրա, որով յետ են վերցվում տարիների ընթացքում ձեռք բերված իրաւունքները, և այն էլ այն ժամանակ, երբ կրետական ազգային ժողովը, որը ոչ մի կերպ չէր ուզում ճանաչել կղզու Թիւրք ազգաբնակութեանը հաւասարասար իրաւունքներ տալու խնդիրը, իր յունիսի 26-ի նիստում որոշել է. որ սքանից յետոյ մահմէդական պատգամաւորների և պաշտօնեաների իրաւունքները պիտի վերականգնվեն։

«Այսպիսով,—ասում է թերթը,—գլխաւոր թիւրիմացութիւնը, որը քիչ մնաց զինված ընդհարում առաջ բերէր Յունաստանի և Թիւրքիայի միջև, այժմ վերցված դարելի է համարել և պետութիւնները հնարաւորութիւն ունեն՝ աւելի նպատաւոր պայմաններում, լուծել կրետական հարցը և որոշել, թէ ինչ դրութեան մէջ պիտի լինի Կրետէն, «սիւզէրէն» թէ «սուվէրէն»։

Այս էլ աւելացնենք, որ կրետացիները Թիւրքիայի սուվէրէնութեան խնդիրը անուանում են ոչ այլ ինչ, եթէ ոչ lapsus linquae (լեզուի սխալ), որ պետութիւնները փոխանակ «սիւզէրէնիտէ» ասելու, ասել են «սուվէրէնիտէ»։ Յար. Գասպարեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 յուլիսի

ԿԻԵՎ։ Փակված է երկրի գիւղատնտեսական զարգացմանը ծառայողների պրոֆէսիօնալ ընկերութիւնը։ կանոնադրութիւնը խախտելուն համար։

ՍՏԱՐԱՑԱ ՐՈՒՍՍԱ։ Յուլիսի 11-ի առաւօտեան ժամը 10-ին տաճար ժամանեցին յունաց Թագուհի Օլգա Կոնստանտինովնան և Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչը։ Ունկնդրելով պատարագին և մաղթանքին՝ վերադարձան պալատ։ Երեկոյեան նրանք այցելեցին տեղական թատրոնը, ուր այդ ժամանակ ներկայացնում էին „Обрывъ“ վէպից վերածված պիէսան։ Քաղաքը զարդարված էր հրավառութեամբ և յունական ու ռուսական դրօշակներով։ Պալատի այգում խնդված բազմութիւնը ցնծութեամբ ողջունեց թատրոնից վերադարձող բարձր հիւրերին։

ՎՕՋՆԵՍԵՆՍԿԱՅԱ (Պոլտավկայա նահ.)։ Խաստուտ գիւղում երևան են հանված քարածուխի, ալէբաստրի, արծաթի և արճճի հանքեր։ Բէլգիական ինժենէրները բանակցութիւններ են վարում կապալով վերցնելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մինիստրների խորհրդին ներկայացվել է մի առաջադրութիւն, որով խնդրվում է թոյլատրել Ռիգա քաղաքին՝ $8^1/_2$ միլիոն ռուբլու փոխառութիւն կնքել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ

Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վէներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒՂԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՌԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վէներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—$12^1/_2$—$1^1/_2$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—$1^1/_2$—2 ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—6—$6^1/_2$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Գնաները 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

103. 0—74

ՄԱՄՈՒԼԻ ԲԻՒՐՕ

(ԱՂԲԻՒՐ ՏԱՐԱԶԻՆ կից)

ՄԷԿ ՄԻԼԻՈՆ 700 ՀԱԶԱՐ

քառ. սանտ. ընտիր ԿԼԻՆԷ փայտի, պողպատի, պղնձի և ցինկի վրա տրվում են վարձու պարբերական հանդէսների, դասագրքերի, պլանախների, ալբոմների, օրացոյցների համար։ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ամեն տեսակ կլիշեների պատուէրներ, որ պատրաստվում են Եւրոպայի հռչակաւոր արուեստանոցներում։ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ տպագրական գործի հետ առնչութիւն ունեցող ամեն տեսակ պատուէրներ։ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԵՆ ցանկացողների համար օրացոյցներ, գրքեր, ալբոմներ, բրոշիւրներ, պիէսներ և այլն և այլն։

Դիմել՝ Тифлисъ, Бюро Печати. Мадатовская, № 5.

(Հ. ու.) 810. 0—3

Печатается и въ самомъ непродолжительномъ времени поступитъ въ продажу:

„СПИСОКЪ ФАБРИКЪ И ЗАВОДОВЪ РОССІИ“.

Списокъ этотъ съ разрѣшенія Г. Министра Финансовъ и Г. Министра Торговли и Промышленности—составленный Редакціею «Торгово-Промышленной Газеты» и издаваемый Торговымъ Домомъ Л. и Э. Метцлъ и К°,

ЯВЛЯЕТСЯ ЕДИНСТВЕННЫМЪ ОФФИЦІАЛЬНЫМЪ ИЗДАНІЕМЪ

перечня существующихъ въ Европейской и Азіатской Россіи фабрично-заводскихъ предпріятій.

Какъ оффиціальное изданіе «Списокъ фабрикъ и заводовъ Россіи» будетъ заключать въ себѣ точныя данныя о всѣхъ предпріятіяхъ фабрично-заводской промышленности, свыше 30,000 адресовъ, и кромѣ сего, въ немъ будутъ сообщены впервые самыя полныя свѣдѣнія о всѣхъ табачныхъ и спичечныхъ фабрикахъ, сахарныхъ, винокуренныхъ и кирпичныхъ заводахъ, мукомольныхъ мельницахъ и маслодѣльныхъ заводахъ.

Съ выпускомъ этого единственнаго оффиціальнаго изданія торгово-промышленнымъ кругамъ уже не придется прибѣгать къ различнымъ частнымъ аналогичнымъ изданіямъ, которыя, преслѣдуя исключительно коммерческія цѣли и не заботясь нисколько о полнотѣ и точности свѣдѣній, сообщаютъ, якобы по оффиціальнымъ даннымъ, въ спискахъ фабрикъ и заводовъ уже устарѣлыя, крайне неточныя и далеко неполныя свѣдѣнія.

Цѣна «Списка фабрикъ и заводовъ въ Россіи» по предворительной подпискѣ опредѣлена въ 10 рублей за экземпляръ, каковая по выходѣ изданія въ свѣтъ будетъ значительно повышена.

Подписка принимается въ редакціи «ТОРГОВО-ПРОМЫШЛЕННОЙ ГАЗЕТЫ». С.-Петербургъ, Галерная. 24, и въ Торговомъ Домѣ Л. и Э. МЕТЦЛЪ и К°, Москва, 142. С.-Петербургъ, Варшава. 0—11

Типографія „Экономія“ Большая Вапкская № 3.